ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____» _____ 2026 թ.

ԱՐԵՎԻԿ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻՆ

ՀՀ Լոռու մարզ, ք.Ալավերդի, Բաղրամյան փողոց 10, բն. 33

Հարգելի՛ տիկին Մնացականյան,

Ի պատասխան Ձեր 05.11.2026թ. հ.2350322 հարցման՝ հայտնում եմ, որ Ալավերդի համայնքում իրականացված վարչական և իրավական հսկողության շրջանակում ուսումնասիրվել է նաև Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության ոլորտում իրականացված գործառույթների օրինականությունը:

Պաշտոնների նշանակման աշխատանքներում, այդ թվում՝ ժամանակավոր թափուր պաշտոններում, թերություններ չեն արձանագրվել: Միաժամանակ արձանագրվել է, որ աշխատակազմի կողմից խախտվել են համայնքային ծառայության մասին օրենսդրությամբ սահմանված՝ թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթներ հայտարարելու ժամկետները և աշխատակազմին պարտավորեցվել է ապահովել օրենսդրության պահանջների կատարումը:

Համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների մրցութային հանձնաժողովի կազմում ընդգրկվում են Լոռու մարզպետի երկու ներկայացուցիչներ, որոնք ապահովում են մրցույթների անցկացումը դիմողների համար հավասար պայմաններում:

Ինչ վերաբերում է Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի կողմից քաղաքացիների դիմումների քննարկման նկատմամբ վերահսկողություն սահմանելուն, հայտնում եմ, որ «Տարածքային կառավարման մասին» օրենքով մարզպետին նման լիազորություն վերապահված չէ:

Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիների իրավունքները խախտելու դեպքում վերջիններս կարող են դրանք վերականգնել դատական կարգով:

Հարգանքով՝

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Invalid signature

Ստորագրող
ԱՐՍԵՆ ՂԱՐԻԲՅԱՆ
2414880046

X

2026-11-06 18:03:26 GMT+4

ԿԱՏԱՐՈՂ Signed by: GHARIBYAN ARSEN 2414880046 Ա.ՂԱՐԻԲՅԱՆ

կատ. ՏԿ և ՏԻ հարցերի վարչության գլխավոր մասնագետ Վ.Հովհաննիսյան
հեռ. /0322/ 4-09-27